10081214

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Էլ. փոստ՝minister@minfin.am

Հեռ.՝ (+374 60) 700 304, ֆաքս՝ (+374 60) 700 358
Վեբ կայք՝www.minfin.am

05.06.2015թ. № 01/87/14445-15

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՐԹՈՒՐ ՋԱՎԱԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ջավադյան

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության վարչապետի 03.06.2015թ. թիվ 02/23.18/9412-15 հանձնարարականի՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից մշակված ««Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին», «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին», «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագծերի փաթեթ) վերաբերյալ դիրքորոշում հայտնելու կապակցությամբ, հայտնում ենք հետևյալը.

1. Նախագծերի փաթեթով հստակեցված չէ ստեղծվող ֆինանսական խմբերի կարգավիճակը: Մասնավորապես հանդիսանալու են դրանք իրավաբանական անձինք, որի դեպքում անհրաժեշտ կլինի հարկային օրենսդրությամբ հստակեցնել նաև վերջիններիս կողմից իրականացվող գործարքների հարկման հետ կապված հարաբերությունները:
2. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ արգելվում է նորմատիվ իրավական ակտում կատարել բառերի կամ տերմինների անհարկի կրճատումներ, ինչպես նաև բառերի կամ տերմինների հապավումներ:

Ուստի, առաջարկում ենք ««Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 5-րդ հոդվածով լրացվող 39.15-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում բացել «ՖՀՄՍ» հապավումը: Միևնույն ժամանակ, առաջարկում ենք սույն կետով նախատեսել «մայր կազմակերպության» հասկացությունը, այլ ոչ թե հղում կատարել ՖՀՄՍ 10-րդ ստանդարտին:

3. Առաջարկում ենք բովանդակային առումով խմբագրել Նախագծի 39.15-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը:
4. Առաջարկում ենք սահմանել Նախագծի 39.15-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով նախատեսվող պատասխանատու անձի գործառույթները:
5. Հոդված 39.16-ի 5-րդ մասում, հաշվի առնելով տվյալ հոդվածի 1-ին մասով Կենտրոնական բանկին վերապահված լիազորությունը (ֆինասնական կազմակերպությունները ֆինանսական խումբ ճանաչելու որոշման կայացման համար հիմք է հանդիսանում Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքը), առաջարկում ենք նախատեսել նաև կազմակերպություններին որպես ֆինանասական խումբ որակելու դադարեցման հնարավորություն Կենտրոնական բանկի նախաձեռնությամբ/ հիմնավոր կարծիքի հիման վրա՝ Հոդված 39.16-ի 5-րդ մասի առաջին նախադասությամբ սահմանված պայմաններում:
6. Նախագծի 39.16-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ Կենտրոնական բանկը, արդյունավետ վերահսկողություն իրականացնելու նպատակով, կարող է ֆինանսական խմբի որակման (ճանաչման) գործընթացում ֆինանսական խումբը դասակարգել ենթախմբի(երի): Առաջարկում ենք նշել, թե որ դեպքերում Կենտրոնական բանկը կարող է ֆինանսական խումբը դասակարգել ենթախմբի(երի):
7. Առաջարկում ենք Նախագծի 39.18-րդ հոդվածում նախատեսել, թե ինչ հիմքերի դեպքում կարող է չեղյալ համարվել պատասխանատու անձի նշանակումը կամ որ դեպքերում կարող է փոփոխվել նշանակված պատասխանատու անձը:
8. Առաջարկում ենք վերանայել Հոդված 39.18-ի մասերի համարակալումը
9. Նախագծի 39.21-րդ հոդվածի համաձայն՝ Կենտրոնական բանկը կարող է սահմանել ֆինանսական խմբի և/կամ ենթախմբի ներքին հսկողության նվազագույն

պահանջներ: Առաջարկում ենք նախատեսել, թե որ դեպքերում և ինչ նպատակով կարող են սահմանվել վերը նշված ներքին հսկողության նվազագույն պահանջները:

10. Նախագծի 39.22-րդ հոդվածի 2-րդ մասում նշված «2-րդ կետով» բառերն անհրաժեշտ է փոխարինել «1-ին կետով» բառերով:

11. Նախագծի 39.22-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ որոշումների կայացման ժամանակ քվեարկելու իրավունքից մասնակցին զրկելու դեպքում Կենտրոնական բանկն իրավասու է այդ իրավունքը վերապահել Կենտրոնական բանկի խորհրդի կողմից նշանակված ժամանակավոր կառավարման մարմնին: Առաջարկում ենք Նախագծով նախատեսել Կենտրոնական բանկի խորհրդի կողմից նշանակված ժամանակավոր կառավարման մարմնի լիազորությունները և գործունեության իրավական կարգավորումը:

12. ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 5-ի N 13 արձանագրային որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 112-րդ կետը սահմանում է, որ պետք է խուսափել և/կամ արտահայտության կիրառումից, քանի որ այն չափազանց անորոշ է: Ուստի, առաջարկում ենք Նախագծում միաժամանակ չկիրառել «կամ» ու «և» շաղկապները:

13. Առաջարկում ենք պարզաբանել Նախագծի ամբողջ տեքստում նշված «հիմնավոր կարծիք» հասկացությունը:

Միաժամանակ կից Ձեզ ենք ներկայացնում Նախագծերի վերաբերյալ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունը:

Առդիր՝ 1 էջ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԳԱԳԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

????? ????????
Jun 5 2015 7:10 PM +04:00

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ • ՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ • ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԱՅԻՆ ԲԱԺԻՆ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ • ՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ • ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԱՅԻՆ ԲԱԺԻՆ

Կատ.՝ Ֆին. շուկայի վերլուծ. և զարգ. բաժին
հեռ.՝ +374 (011) 800 133

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծերի փաթեթով առաջարկվում է սահմանել, որ փոխկապակցված՝ երկու կամ ավելի ֆինանսական կազմակերպությունները համարվում են ֆինանսական խումբ և կարգավորել ֆինանսական խմբերի գործունեության հետ կապված հարաբերությունները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ նախագծերի փաթեթի ընդունման ազդեցությունը ՀՀ պետական և համայնքային բյուջեների ծախսերի և եկամուտների վրա կունենա չեզոք ազդեցություն: